շարքերը, որ տեղացիների լեզոով կոչւում էին «ըղտու քարեր»: Այդ բոլորը յիշեցնում էին ինձ այն վաղեմի հերոսական արկածները, որ կատարոել էին Բաբելացոց աստծու՝ Բէլի եւ մեր նախահոր՝ Հայկ-դիւցազնի մէջ: Նայում էի դէպի ձախ. երեւում էր Տաւրոսի շղթան՝ Խութայ բարձր լեռներով, որոնց միւս կողմում՝ շատախցիք գազանների հետ են պատերազմում: Իսկ մեր առջեւում Մեղրի գետի շամբուտների մէջ թաքնոած էին Օձ քաղաքի առասպելապատում աւերակները: Դէպի ո՛ր կողմ եւ նայում էի, երեւում էին հայրենեաց անմոռանալի յիշատակները: Բոլորը իմ սրտին շատ մօտ էին, բոլորը լցնում էին իմ սիրտը մի սրբազան հպարտութեամբ, երբ մտաբերում էի փառաւոր անցեալը, եւ, միեւնոյն ժամանակ, բոլորը լցնում էին իմ սիրտը մի թախծալի տխրութեամբ, երբ տեսնում էի թշոառ ներկան...

Խօսակցութիւնը հասարակաց լինելու համար, կրօնաւորը այժմ խօսում էր թուրքերէն: Նա Ասլանին՝ երկրի եւ նրա պատմութեան հետ անծանօթ մի եւրոպացու տեղ դնելով, պատմում էր նրան զանազան անցքեր Տարօնի մասին, ի հարկէ, կրօնական կողմից միայն, այն եւս ծուռ ու սխալ կերպով:

— Այդ երկիրը, — ասում էր նա, — լի է այն բոլոր յիշատակարաններով, որտեղ կատարոել են մեր ս. Լուսաւորիչ հօր հրաշագործութիւնները: Երբ գնաց նա Կեսարիա եւ Ղեւոնդես հայրապետից հայոց քահանայապետ ձեռնադրոեցաւ, վերադարձին Ղեւոնդեսը ընծայեց նրան սրբոց շատ մասունքներ, որ տանէ Հայաստան եւ, կռատները քանդելով, նրանց տեղը քրիստոնէական տաճարներ հիմնէ: Այդ մասունքների թւում էին ս. Յովհաննէս Կարապետի եւ ս. Աթանագինէս հայրապետի նշխարները: Մի զոյգ սպիտակ ջորիներ տանում էին այն կառքը, որի մէջ դրած էին սրբոց մասունքները: Երբ եկան Տարօն, անցան Եփրատ (Արածանի) գետը եւ մօտեցան Քարքէ լեռան բարձրութիւններին, այդ միջոցին աստծու հրամանով ջորիները կանգ առին, այլեւս առաջ չգնացին: Ս. Լուսաւորիչը հասկացաւ, որ այնտեղ պէտք էր հիմնել տաճարները: Բայց այդ լեռան գլխին շատ կռատներ կային, որոնց մէջ դեւեր էին բնակւում: Ս. Լուսաւորիչը խաչակնքեց, կռատները կործանոեցան, եւ դեւերը հալածոեցան: Այնտեղ հիմնեց ս. Լուսաւորիչը Ս. Կարապետի վանքը եւ ամփոփեց նրա մէջ իր բերած սուրբ մասունքների մի մասը: Այն դեւերից մէկը մնաց միայն, որ մինչեւ այսօր ծառայում է վանքի մէջ:

— Ի՞նչ է շինում, — ընդհատեց Ասլանը նրա պատմութիւնը:

— Վանքի թոնիրների մոխիրը առնում է եւ ստորերկրեայ աներեւոյթ ճանապարհով տանում է, ածում է Եփրատ գետի մէջ: Նրան կոչում են «կաղ